EASYPAY
0014, Yerevan, Armenia
8/171 Adonts
+(374) 11 247 247
+(374) 11 261 261
info@easypay.am
www.easypay.am

ՆԵ_653/22

«10» հոկտեմբերի 2022թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ
լրագրող պարոն Տիրայր Մուրադյանին

Հարգելի պարոն Մուրադյան,

Ի պատասխան 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ամսաթվով թվագրված Ձեր գրության (այսուհետ՝ Գրություն), որը ներկայացվել է «Իզի Փեյ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն)՝ միևնույն օրը Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու և մուտագրվելու եղանակով, հայտնում եմ հետևյալը.

Գրության 1-ին հարցի առնչությամբ տեղեկացնում եմ, որ Երևան քաղաքի մայթեզրերին տեղադրված «Իզի Փեյ» ՍՊԸ-ի վճարահաշվարկային համակարգով շահագործվող ավտոմատ ինքնասպասարկման վճարումների ընդունման տերմինալները (այսուհետ՝ Տերմինալ) տեղադրվել են Երևանի Քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 3-ի թիվ 270-Ա որոշման հիմքով:

Գրության 2-րդ հարցի առնչությամբ հայտնում եմ, որ Երևանի Քաղաքապետի 2016 թվականի փետրվարի 3-ի թիվ 270-Ա որոշման 1-ին պարբերությամբ վկայակոչված է Երևանի Քաղաքապետարանի, «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կոնսորցիումի միջև 04.04.2013 թվականին կնքվել է Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման գնման թիվ ԵՔ-ՄԵԾՁԲ-12/2 պայմանագիրը, որի առնչությամբ վճարումների ընդունման հասանելի և դյուրին միջոցների ապահովման համար «Իզի Փեյ» ՍՊԸ-ի և «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի միջև 2017 թվականի դեկտեմբերի 12-ին կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որն էլ պարունակում է ֆինանսական խոշոր բաղադրիչ՝ վճարումների ընդունման տերմինալների տեղադրման մասով: Փոխանցված գումարների չափերի մասին տեղեկատվության տրամադրումը Ընկերությունը թողնում է «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի հայեցողությանը՝ խնդրելով դիմել ըստ ենթակայության:

Գրության 3-րդ հարցի առնչությամբ հայտնում եմ, որ վճարումների ընդունման տերմինալների իրանի արտաքին մակերեսներին տեղադրված արտաքին գովազդները հաստատվում են Երևանի քաղաքապետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից, իսկ արտաքին գովազդի համար վճարումները կատարվում են ըստ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե հաշվեգրելով գովազդների փակցման համար զբաղեցրած մակերեսի համար օրենքով սահմանված դրույքաչափերը: Փոխանցված գումարների չափերի մասին տեղեկատվության տրամադրումը Ընկերությունը թողնում է պետական կառավարման մարմնի հայեցողությանը՝ խնդրելով դիմել ըստ ենթակայության:

Հարգանքով՝

Տնօրեն Միքայել Գաբրիելյան

«ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ
"ИЗИ ПЕЙ"
"EASY PAY"
02258501